



Թռչնի գրիպ
Թախանդում

2

6

Անտիուտոպիա
Նրա որոշումից էր
կախված մոլորակի
ձակատագիրը



Լուսանկարներ,
որոնք փոխել են
աշխարհը
Հաղթանակը
Թայմ Սքվերի
վրա

7



արտակարգ թերթ

www.emergency.am

«Հրշեջները համայնքներում» հանրային իրազեկման ծրագիր

Ծրագրի նպատակը

Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության պատրաստվածության բարձրացում, աղետների ազդեցության և խոցելիության նվազեցում՝ հանրային իրազեկման համակարգում հրշեջ-փրկարարների ընդգրկման միջոցով:



Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը Հայաստանում սկսել է ապակենտրոնացված արձագանքման ուժերի հզորացման ծրագիր: SDC «Արձագանք» ծրագիրը նախատեսում է շրջաններում հզորացնել արձագանքման համակարգը՝ համապատասխան սարքավորումների տրամադրման և ինտենսիվ ուսուցման եղանակով:
«Հրշեջները համայնքներում» հանրային իրազեկման պիլոտային (փորձնական) ծրագիրն իրականացվել է 2007 թ: «Արձագանքում» ընդգրկված

երեք մարզերի՝ Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց ձորի 12 հրշեջ մասերի 24 հրշեջներ հանրային իրազեկման դասընթացներ են անցել «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնում:
«Արձագանքված» հրշեջները գինվել են հասարակայնության հետ կապերի՝ բնակչության և ՀԼՄ-ների հետ աշխատանքի վերաբերյալ գիտելիքներով ու մեթոդներով, ինչպես նաև անհրաժեշտ ուսուցողական, խորհրդատվական ու ճանաչողական նյութերով:
Այնուհետև նրանք համայնքային հիմնական թիրախային լսարաններում համայնքապետա-

րաններում ու դպրոցներում, իրականացրել են ոչ միայն ընդհանուր կանխարգելման՝ ռիսկերի և դրանց նվազեցման ուղիների մասին բացատրական աշխատանքներ, այլև ապահովել են հասարակության իրազեկումը «Արձագանք» ծրագրի մասին:

Նշված երեք մարզերի դպրոցներում հայտարարվել էր նաև «Արտակարգ իրավիճակները ձեր կյանքում» թեմայով շարադրությունների ու «Աղետները և դրանց դեմ պայքարը» երեխաների աչքերով» նկարների մրցույթ: Լավագույն շարադրություններն ու նկարները տպագրվել են «Արտակարգ թերթում», զետեղվել՝ «Արտակարգ ալիքի» և փրկարար ծառայության կայքերում, օգտագործվել գրքուկներում, օրացույցներում և պատասառներում: Աղետների ռիսկի նվազեցման համաշխարհային օրը մրցույթների հաղթողները պարգևատրվեցին արժեքավոր նվերներով:

Պիլոտային ծրագրի արդյունավետ իրականացումը լուրջ հիմք դարձավ հանրապետության մյուս մարզերում եւս «Հրշեջները համայնքներում» հանրային իրազեկման ընդգրկում ծրագրի իրականացման համար: Ըստ 2008 թ. ստորագրված համաձայնագրի՝ «Հրշեջները համայնքներում» ծրագիրը կշարունակվի եւս չորս տարի՝ մինչև 2010 թվականի վերջը՝ ընդգրկելով հանրապետության բոլոր մարզերն ու Երեւանը:
Նոյեմբերի 10-15-ը Արտակարգ ալիքի ուսումնական կենտրոնում Սյունիքի և Լոռու մարզերի բոլոր հրշեջ մասերից գործուղված 24 հրշեջ-փրկարարներ էին:

Ուսուցման ընթացքում հրշեջ-փրկարարներին խնդրեցինք պատմել իրենց աշխատանքային առօրյայում պատահած որեւէ դեպք, որում կլինի ուսանելի ինչ-որ բան: >>> 4



«Էլիտ գրուպ» առաջարկում է կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում


E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլևս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպը» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն և էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար: Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:





Հայաստանի փրկարար ծառայությունն զանգահարեք **1-01, 1-12**

Գիակների հայտնաբերում

Լոյեմբերի 6-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Դավթաշենի կամրջի տակ հայտնաբերվել է քաղաքացու դիակ, եւ դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները Հրազդան գետի ափամերձ տարածքից դուրս են բերել Կոտայքի մարզի Ջորական գյուղի բնակիչ, 1986 թ. ծնված Վարդան Մարտիրոսյանի դին եւ հանձնել իրավապահ մարմիններին:

Լոյեմբերի 12-ին ահազանգ է ստացվել, որ Գյումրիի Երեւանյան խճուղու 17-րդ շենքի 13 բնակարանի բնակիչը երեք օր է, ինչ տնից դուրս չի գալիս, եւ բնակարանի դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները բացել են բնակարանի դուռը եւ հայտնաբերել 1925 թ. ծնված Անյա Միրոշենկոյի դին:

Մանուկային թունավորում

Լոյեմբերի 7-ին սննդային թու-

նավորումով Եղեգնաձորի հիվանդանոց, այնուհետեւ Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 1938 թ. ծնված Կարապետ Բաղդասարյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը միջին ծանրության է:

Շնու գազից թունավորում

Լոյեմբերի 8-ին շնու գազից թունավորմամբ Վանաձորի թիվ 2 հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի բնակիչ, 1986 թ. ծնված Գոհար Ներսիսյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

Լոյեմբերի 10-ին նույն ախտանիշով Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց է տեղափոխվել Շիրակի մարզի Մայիսյան գյուղի բնակիչ, 1989 թ. ծնված Արեւիկ Յովհաննիսյանը:

Լրա վիճակը նույնպես գնահատվում է բավարար:

Պայթյուն

Լոյեմբերի 7-ին տեղեկություն է ստացվել, որ ժամը 17.30-ի սահմաններում անհայտ առարկայի պայթյունից ստացած վնասվածքներով Արմավիրի հիվանդանոց է տեղափոխվել 1997 թ. ծնված Սեակ Պետրոսյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը կայուն ծանր է:

Չնարուք

Լոյեմբերի 9-ին, ժամը 20.25-ին տեղեկություն է ստացվել, որ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի սահմանագծին՝ «Ջանգեր» կղզ-

վող տարածքում ծնաբքի հետեւանքով առաջացել է մեծ խցանում, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր մեկնած փրկարարները ձեռնարկել են համապատասխան միջոցառումներ, դուրս է բերվել 10-ից ավելի ավտոմեքենա, կարգավորվել է ճանապարհի բնականոն երթեւեկությունը:

Կատաղած շան կծելու հետեւանքով

Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ հոկտեմբերի 20-ին Ջորական գյուղից կատաղության ախտանիշի կասկածանքով (շան կծելու հետեւանքով) Աշոցքի հիվանդանոց է տեղափոխվել 1997 թ. ծնված Սարգիս Չապանյանը, որը նոյեմբերի 9-ին տեղափոխվել է Երեւանի 3-րդ մանկական, այնուհետեւ՝ Լորքի ինֆեկցիոն հիվանդանոց:

Լոյեմբերի 10-ին տեղեկություն է ստացվել, որ ժամը 09.00-ի սահմաններում տղան հիվանդանոցում մահացել է:

Շանը հայտնաբերել չի հաջողվել:

Լոյեմբերի 10-ին տեղեկություն է ստացվել, որ ժամը 09.00-ի սահմաններում տղան հիվանդանոցում մահացել է:

Շանը հայտնաբերել չի հաջողվել:

Ավտոպատահար

Լոյեմբերի 10-ին Աշտարակ-Գյումրի ավտոճանապարհի 14-րդ կմ-ին, դեռեւս չպարզված հանգամանքներում «ՎԱՁ-21121» մակնիշի 80 LS 555 պետհամարանիշով ավտոմեքենան բախվել է «Ֆորդ-Տրանզիտ» մակնիշի 11 UL 649 պետհամարանիշով ավտոմեքենային, ինչի հետեւանքով «ՎԱՁ-ը» դուրս է եկել ճանապարհից եւ բախվել «ՎԱՁ-21015» մակնիշի 09 OL 989 պետհամարանիշով ավտոմեքենային:

Վթարի հետեւանքով «ՎԱՁ-21121» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, 1974 թ. ծնված Արամ-

յիս Գեղամյանը ստացել է մարմնական ծանր վնասվածքներ եւ Աշտարակի հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել:

Հրդեհներ

Այրվել է պահեստը

Լոյեմբերի 6-ին, ժամը 18.20-ին հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Կոռնիձոր գյուղում:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.30-ին, մարվել՝ 23.40-ին:

Այրվել են Ս. Ասոյանին պատկանող՝ 110 քմ մակերեսով պահեստը եւ այնտեղ պահեստավորած 500 հակ խոտոն ու 200 հակ ծղոտը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.30-ին, մարվել՝ 23.40-ին:

Այրվել են Ս. Ասոյանին պատկանող՝ 110 քմ մակերեսով պահեստը եւ այնտեղ պահեստավորած 500 հակ խոտոն ու 200 հակ ծղոտը:

Հրդեհ «Ալմանդ» ՍՊԸ-ում

Լոյեմբերի 8-ին, ժամը 11.26-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Դավիթ Բեկի փողոցում՝ «Ալմանդ» ՍՊԸ պոլիմերային խողովակների արտադրամասի տարածքում: Երեւանի տարբեր հրշեջ մասերից դեպքի վայր է մեկնել 6 մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 12.11-ին, մարվել՝ 12.40-ին:

Այրվել են Տ. Բաբայանին պատկանող արտադրամասում պահեստավորած 20 քմ մակերեսով խողովակներ, պահեստում՝ 50 պարկ պոլիմերային հումք, 100 մետր խողովակներ, դուռ եւ լուսամուտ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 12.11-ին, մարվել՝ 12.40-ին:

Այրվել են Տ. Բաբայանին պատկանող արտադրամասում պահեստավորած 20 քմ մակերեսով խողովակներ, պահեստում՝ 50 պարկ պոլիմերային հումք, 100 մետր խողովակներ, դուռ եւ լուսամուտ:

Չքուսայգում

Լոյեմբերի 7-ին Աշտարակի Կոմիտասի անվան զբոսայգում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են ատրակցիոն խաղերի 6 նստարան եւ 3 անվարդ:

Վագոն-տնակ

Լոյեմբերի 7-ին Լոռու մարզի

Շիրակամուտ գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են Ս. Ղարիբյանին պատկանող վագոն-տնակի դուռը, պատուհանները եւ ներսի հարդարանքը՝ 44 քմ մակերեսով:

Պահեստավորած խոտ...

Լոյեմբերի 7-ին Սյունիքի մարզի Շաղաթ գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են Ա. Դանիելյանին պատկանող անասնագոմի՝ 80 քմ մակերեսով տանիքը եւ 200 հակ խոտը:

Լոյեմբերի 9-ին Արագածոտնի մարզի Լոր Ամանոս գյուղում այրվել են Նիկայանին պատկանող 400 հակ խոտը եւ Հայրապետյանին պատկանող 900 հակ խոտը, 20 խորձ ցախը, աթար եւ երեք հատ ծառ:

Մեքենայում

Լոյեմբերի 9-ին Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 170-րդ կմ-ին այրվել են «Կատրինա» տաքսի ծառայության «ԳԱՁ-3110» մակնիշի 04 SL 798 պետհամարանիշով ավտոմեքենայի թափքը եւ շարժիչային մասը:

Դեպքի վայր մեկնած հրշեջները կանխել են այրվող ավտոմեքենայի գազի արտահոսքը:

Տնակն ու Գույքը

Լոյեմբերի 12-ին, ժամը 02.25-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Գյումրիի 8-րդ գինվորական ավանում՝ ինքնաշեն տնակում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 02.38-ին, մարվել՝ 03.05-ին:

Ամբողջությամբ այրվել են 8 քմ մակերեսով տնակը եւ

գույքը: >>> 3

միջազգային լուրեր

Չոհվել է 94 մարդ

Ուրբաթ օրը Հայիթիի Փեթինսալի քաղաքում փլվել է դպրոցի բետոնե երկհարկանի շենքի 2-րդ հարկը:



Փլուզման պահին դասասենյակներում պարապմունքներ էին ընթանում եւ շենքում կար մոտ 700 մարդ: Վերջին տվյալներով զոհվել է 94 մարդ:

Ըստ դեպքի վայրում աշխատող փրկարարների՝ մոտ 150

մարդ ստացել է տարբեր աստիճանների վնասվածքներ:

Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ դպրոցի տնօրենը ձերբակալվել է:

Պատահարից մի քանի օր անց Հայիթիում փլուզվել է մեկ այլ դպրոցի շենք: Պատահարը տեղի է ունեցել երկրի մայրաքաղաք Պորտ-օ-Պրենսում: Ըստ փրկարարների տվյալների՝ զոհվածներ չկան, տուժել է 5 աշակերտ:

Երկու դպրոցների փլուզման պատճառները ճշտվում են:

Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ դպրոցի տնօրենը ձերբակալվել է:

Պատահարից մի քանի օր անց Հայիթիում փլուզվել է մեկ այլ դպրոցի շենք: Պատահարը տեղի է ունեցել երկրի մայրաքաղաք Պորտ-օ-Պրենսում: Ըստ փրկարարների տվյալների՝ զոհվածներ չկան, տուժել է 5 աշակերտ:

Երկու դպրոցների փլուզման պատճառները ճշտվում են:

Թախանդում թռչնի գրիպ է հայտնաբերվել

Թախանդի հյուսիսում հայտնաբերվել է վերջին 10 ամսվա ընթացքում թռչնագրի-



պի վիրուսով ընտանի թռչունների վարակման առաջին դեպքը:

Մարդու համար վտանգավոր H5N1 վիրուսը հայտնաբերվել է Սուկոտայ շրջանի գյուղական տնտեսություններից մեկում: Կանխարգելիչ նպատակով տնտեսությունում ոչնչացվել են բոլոր թռչունները:

Շրջանում հայտարարվել է կարանտին:

Հրդեհ միջուկային ռեակտորում

Հինգշաբթի օրը Ճապոնիայի Հոնսյու կղզու հյուսիս-արեւելքում գտնվող ԱԷԿ-ի միջուկային ռեակտորի տարածքում հրդեհ է բռնկվել: Աշխատողներից մեկը այրվածքներ է ստացել: Հրդեհն արագորեն մարվել է:

ԱԷԿ-ի վարչակազմը վստահեցրել է, որ ճառագայթման արտահոսք չի եղել:

Պայթյուն վառողային պահեստում

Չորեքշաբթի օրը Տոկիոյի վառողային պահեստում տեղի է



ունեցել ուժեղ պայթյուն, զոհվել է երկու մարդ, եւս չորսը ստացել են վնասվածքներ:

Պայթյունի հետեւանքով ծագել է հրդեհ, որը հրո ճարակ են դարձրել իրար միացնող երկու շինություններ:

Հրդեհի դեմ պայքարել են 60 մարտական հաշվարկ եւ ավելի քան 100 մարդ:

Պայթյուն՝ լքված ոսկու հանքահորում

Գլինեայի ոսկու հանքերից մեկում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհվել է 14 մարդ:

Ոստիկանության ներկայացուցիչները հաստատել են պայթյունի փաստը, բայց զոհերի եւ վիրավորների մասին տվյալներ չեն հրապարակել:

Պայթյունի պատճառը ճշտվում են:

Պայթյունի պատճառը ճշտվում են:

Պայթյունի պատճառը ճշտվում են:

Տահնա Թյունիբաբյան



<<< 2 Երևան հայտնաբերվել է 1964 թ. ծնված Օքսանա Պ. ի դին, իսկ տնակի բնակչուհի՝ 1940 թ. ծնված Ռաիսա Մակարովան վերին եւ ստորին վերջույթների այրվածքներով տեղափոխվել է Գյումրիի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

ԼՂ ՓԾ Երատվական կենտրոն

Հրդեհ

Լոյսերի 3-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում: Այրվել են 20 տոննա պահեստավորած խոտ եւ կիսածածկ՝ 80 քմ մակերեսով:

Զենք-զինամթերք

Հոկտեմբերի 30-ին Ասկերանի շրջանի Խանցք գյուղի մերձակայքում հայտնաբերվել է 1 հատ ավիառումբ, որը վնասագերծել են ԼՂՀ փ/ծ սակրավորները:

Ավտոպատահարներ

Հոկտեմբերի 30-ին ահազանգ է ստացվել, որ Ստեփանակերտի Ազատամարտիկների փողոցում տեղի է ունեցել ավտովթար:

Իրար են բախվել «Գազել» մակնիշի մարդատար եւ «Ջիպ» մակնիշի մեքենաները, որի հետեանքով տեղի է ունեցել գազի արտահոսք եւ բռնկում:

Մեքենաներն ամբողջությամբ այրվել են:

Տուժածներ չկան:

Լոյսերի 5-ին ահազանգ է ստացվել, որ Ստեփանա-

կերտ-Գորիս ճանապարհի առաջին կիլոմետրին տեղի է ունեցել ավտովթար: Կան տուժածներ:

Դեպքի վայրում պարզվել է, որ «ԲՄՎ-Մ 5» մակնիշի ավտոմեքենան, կորցնելով կառավարումը, դուրս է եկել ճանապարհի երթուղուց եւ ընկել Կարկառ գետը, որի հետեանքով մեքենայի վարորդ, 1973 թ. ծնված Ա. Ասծատրյանը եւ ուղեւոր, 1974 թ. ծնված Ա. Բաբայանը տեղում մահացել են:

Փրկարարների օգնությամբ ջրից դուրս են բերվել զոհվածների դիակները եւ մեքենան:

Լոյս օրը մեկ այլ ավտոպատահար է տեղի ունեցել Ասկերանի շրջանի Շոշ գյուղի մերձակայքում:

Տեղում պարզվել է, որ «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհից եւ շրջվել, որի հետեանքով վարորդ, 1979 թ. ծնված Ա. Աղաջանյանը տեղում մահացել է: Ուղեւոր, 2005 թ. ծնված Մ. Աղաջանյանն ուղեղի ցնցումով տեղափոխվել է հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Դժբախտ պատահար

Լոյսերի 5-ին Հաղորդի շրջանի Լորաշեն գյուղում, 6-ամյա Բ. Սարգսյանը իրենց տան բախված ծառից ընկել է եւ վնասվածքներով տեղափոխվել հիվանդանոց:

Ավելի ուշ տեղեկություն է ստացվել, որ երեխան հիվանդանոցում գիտակցության չգալով մահացել է:

Նաիրա Եղիազարյան

Շախմատի մրցույթ



Շախմատի առաջնություն: Ջոկատներում առաջին եւ երկրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները փրկարարական ուժերի վարչությունում իրենց ուժերը չափեցին մրցումների եզրափակիչ փուլ դուրս գալու համար: Ծավալված հետաքրքիր եւ անզիջում պայքարում հաղթողներ ծանաչվեցին. 1-ին տեղ՝ ՓՈՒՎ ՄՊԲ պետ, փ/ծ գնդապետ Սարգիս Կյուրեղյանը, 2-րդ տեղ՝ Երեւանի թիվ 8 ՇՖՁ պահակախմբի պետ, փ/ծ կապիտան Արմեն Ալեքսանյանը, 3-րդ տեղ՝ ՓՈՒՎ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի պահպանության ՇՖՁ հրամանատարի տեղակալ, փ/ծ լեյտենանտ Միքայել Պետրոսյանը:

Համաձայն ՀՀ ԱԻՆ ՀՓԾ փրկարարական ուժերի վարչության աշխատանքային պլանի, հոկտեմբեր-նոյեմբերի ամիսներին ՓՈՒՎ հատուկ հրշեջ, հատուկ փրկարարական, «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի պահպանության հատուկ հրշեջ եւ Երեւանի հրշեջ-փրկարարական ջոկատների միջեւ անցկացվել է

սեյսմիկ պաշտպանություն

Լոյսերի 6-12-ը ՄՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ նրան հարակից տարածքներում գրանցել են 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երեք երկրաշարժ: Լոյսերի 6-ին եւ 12-ին Հայաստան-Ադրբեջան սահմանային գոտում, Քարվաճառ քաղաքից 2 կմ արեւելք եւ 25 կմ հյուսիս, տեղի են ունեցել համապատասխանաբար 3 եւ 4 բալ ուժգնությամբ երկրաշարժեր: Լոյսերի 12-ին Աշոցք քաղաքից 8 կմ հյուսիս-արեւելք գրանցվել է 3 բալ ուժգնությամբ սեյսմիկ ցնցում:

Տարածաշրջանում. գրանցվել է 3 բալ եւ ավելի ուժգնությամբ մեկ թույլ երկրաշարժ: Այն տեղի է

ունեցել նոյեմբերի 8-ին, Իրանի Ահար քաղաքից 55 կմ հյուսիս-արեւմուտք, ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3-4 բալ:

Տարածաշրջանից դուրս. գրանցվել է 6 եւ ավելի մագնիտուդով չորս ուժեղ երկրաշարժ: Լոյսերի 7-ին Վանոատու կղզիների ափամերձ շրջանում, Սանտո քաղաքից 125 կմ հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել 6,4 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 5 եւ ավելի մագնիտուդով 1 նախացնցում եւ 4 հետցնցում: Այդ օրը 6,2 մագնիտուդով երկրաշարժ է գրանցվել Բանդա ծովում: Լոյսերի 8-ին 6,0 մագ-

նիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել Տոնգայի հանրապետությունում: Երկու ժամ անց հետեւել է 5,5 մագնիտուդով հետցնցում: Նշված երկրաշարժերը տեղի են ունեցել Խաղաղ օվկիանոսի հարավային հատվածում, ցունամի չեն առաջացրել, զոհեր եւ ավերածություններ չկան: Լոյսերի 10-ին Չինաստանի Քինգայ նահանգի Դա Քայրան քաղաքից 55 կմ հարավ-արեւելք գրանցվել է ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 6,5 մագնիտուդ: Երկրաշարժի հետեանքով զոհեր եւ ավերածություններ չկան:

ՄՊԱԾ գործակալություն

Հրատարակություն 1-03 Երևան

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 3466 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 437 մարդ: Եղել է մանկական 216 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 49 երեխա: Գրանցվել են 40 մահ եւ 17 դժբախտ պատահար:

Լոյսերի 5

Պուշկինի փողոցում՝ Հյուսիսային պողոտայի շինհրապարակներից մեկում բարձրությունից ընկել է 47-ամյա Մ. Գոթանյանը եւ աջ ազդրի կտրվածքով տեղափոխվել հիվանդանոց:

Բրյուսովի 26 հասցեում բարձրությունից ընկած 57-ամյա Ա. Բուլանյանը բազմակի վնասվածքներով տեղափոխվել է «Էրեբունի», իսկ Ավանի 7-րդ փողոցի 100 տան բնակիչ, բարձրությունից ընկած 30-ամյա Գ. Բասիլյանը ողնաշարի սալաքարով տեղափոխվել է «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Լոյսերի 6

Պոպովի 5 հասցեում բարձրությունից ընկել է 78-ամյա Ա. Ղազարյանը եւ ուղեղի ցնցումով տեղափոխվել «Էրեբունի» բժշ-

կական կենտրոն:

Լոյսն ախտանիշով թիվ 3 մանկական հիվանդանոց է տեղափոխվել Նուբարաշենի թիվ 2 դպրոցում բարձրությունից ընկած 10-ամյա Ա. Կարապետյանը:

Դեղորայքային թունավորումով թիվ 1 համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել Խոսրոյանի 150 հասցեում բնակվող 2 տարեկան Ռ. Մաղիշկյանը:

Լոյսերի 7

ժավելի սպիրտից թունավորումով «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել Լոր Լորի 7-րդ զանգվածի 38 շենքի բնակիչ, 40-ամյա Մ. Մանուկյանը:

Լոյսերի 8

Կոմիտասի պողոտայում վրաերթի են ենթարկվել հասակակիցներ՝ 18-ամյա Ս. Սահակյանը եւ Մ. Զուլումյանը, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են մայրաքաղաքի տարբեր հիվանդանոցներ:

Լոյսերի 9

Բոտոլիզմի ախտանշանով հիվանդանոց են տեղափոխվել Հարավ-արեւմտյան Ա2 թաղա-

մասի բնակիչներ՝ 11-ամյա Սաթենիկ, 15-ամյա Արարատ, 16-ամյա Գայանե, 17-ամյա Գոհար Գրիգորյանները եւ 35-ամյա Ա. Աբրահամյանը:

Լոյսերի 10

Ամիրյան փողոցում եւ Հանրապետության հրապարակում վրաերթի են ենթարկվել 35-ամյա Ռ. Արիստակեսյանն ու 30-ամյա Կ. Հակոբյանը, որոնցից առաջինը վնասվածքներով տեղափոխվել է թիվ 2 հիվանդանոց, իսկ երկրորդը, գանգուղեղի վնասվածքով՝ «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Վերոնշյալ հիվանդանոց են տեղափոխվել նաեւ Լար-Դոսի եւ Խորենացու փողոցների խաչմերուկում եւ Շիրակի 10 հասցեում վթարի ենթարկվածներ՝ 44-ամյա Գ. Խաչատրյանը եւ 27-ամյա Ա. Ապրեսյանը:

Լոյսերի 12

Էրեբունի փողոցում տեղի ունեցած վրաերթի հետեանքով 21-ամյա Լ. Աղաջանյանը ստացել է աջ սրունքի ոսկրերի փակ կտրվածք եւ գանգուղեղի վնասվածք: Տուժածը տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Եղանակի տեսություն

Լոյսերի 06-ին, 08-11-ը առանձին շրջաններում դիտվել են տեղումներ՝ 1-6 մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում, Տավուշում եւ Սյունիքի հովիտներում՝ +13...+18, Լոռիում, Սյունիքի նախալեռներում եւ Ար-

ցախում՝ +10...+15, լեռնային շրջաններում՝ +6...+11 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -3...-8 (Աշոցքում՝ -10), Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ 0...-5, Արարատյան դաշտում՝ -2...+3, Սյունիքի հո-

վիտներում եւ Արցախում՝ +0...+5, Տավուշում՝ +2...+7 °C (Դիլիջանում՝ -1):

Առաջիկայում սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին հարավ-արեւելյան՝ 3-8 մ/վ: Օդի ջերմաստիճանն էլ պահես չի փոխվի:



«Հրշեջները համայնքներում» հանրային իրազեկման ծրագիր

<<< 1

Ամեն ինչ սկսվում է անվտանգության կանոններից

2006 թվականի սեպտեմբերի 20-ին, առավոտյան ժամը 9.00-ին Կապանի ՅՓՁ-ում ընդունեցի հերթափոխը: Ժամը 13.00-ին ահազանգ ստացվեց: Քաղաքի

Անվտանգության կանոնների գիտակցված խախտում

2007 թվականի մարտի 24-ն էր: Ժամը 17.00 ի սահմաններում ահազանգ ստացանք, որ այրվում է Գուգարք գյուղի բնակիչ Միշա Քարհանյանին պատկանող խոտի դեզը: Օպերատիվ ձեռք բերվեց:



գործարանային թաղամասի բենզալցակայանում հրդեհ էր բռնկվել: Դեպքի վայր մեկնեցինք ՅՓՁ-ի երկու մարտական հաշվարկով: Պարզվեց, որ բենզալցակայանի երկու աշխատակից ծանր այրվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Մենք օպերատիվ կարգով իրականացրինք հրդեհաշիջման աշխատանքները: Հրդեհը մարելուց հետո կա-

տական ջոկը մեկնեց դեպքի վայր, եւ սկսեց կռիվը կրակի հետ: Ինչու կռիվը, քանի որ խոտի դեզը տեղակայված է անասնագոմին մոտ, իսկ սա էլ իր հերթին՝ սեփական տանը կից: Արագորեն կատարվեց հետազոտում եւ բացազատում, ու անցանք հրդեհաշիջմանը: 40 րոպե հետո հրդեհը մարված էր եւ ոչ ոքի չէր սպառնում: Սեփական տանը



տարեցինք բենզինի տարողությունների հովացման աշխատանքներ: Իրավիճակը պայթուցանավտանգ էր, սակայն մեր արագ եւ արդյունավետ գործողությունների շնորհիվ վտանգը կանխվեց:

գտնվող մեկ տոննա խոտի դեզի կեսը այրվել էր: Պարզվեց, որ տանտերը անտեսել է մեր նախազգուշացումը եւ խոտի դեզը պահել այնպիսի տեղում, որտեղ էլեկտրական լարեր կան. հրդեհի պատճառ էր դարձել կարծ միացումը:

Հրդեհը առաջացել էր լցակայանի ավտոմատ սարքի անսարքության եւ լցակայանի աշխատակիցների կողմից անվտանգության կանոնները չպահպանելու պատճառով:

Արայիկ Հարությունյան
Գուգարքի ՅՓՁ-ի հերթափոխի պետ, փ/ծ կրտսեր սերժանտ

Լեւոն Թամրազյան
Կապանի ՅՓՁ-ի օղակի հրամանատար, փ/ծ ավագ սերժանտ

Առաջին հրդեհը
Ինչպես ամեն պատանի, դպրոցն ավարտելուց հետո ուզում

էի գնալ իմ երազած մասնագիտության հետեւից, բայց հանգամանքների բերումով, թե պատահամբ՝ դարձա հրշեջ: Առաջին անգամ, երբ ոտք դրեցի հրշեջ մաս, ոչինչ չէի հասկանում: Սկսվեց հրշեջի առօրյան: Ես փորձում էի հասկանալ եւ սովորել փորձառու հրշեջներից: Առաջին մի քանի հերթափոխն անցավ առանց դեպքերի:

Եվ մի օր էլ... Գիշեր էր, լռություն: Ու այդ լռության մեջ հնչեց կանչի զանգը: Հրդեհ է: Բոլորը մի մարդու պես պատրաստվեցին մեկնման: Հերթափոխի պետը՝ ինձ, որպես նորեկի, կցեց ամենափորձառու հրշեջին, ապահովելու համար իմ անվտանգությունը: Շատ լարված էի: Մեքենայի մեջ մարմինս դողում էր, բայց դա վախ չէր: Ես չէի հասկանում, թե ուր եմ գնում եւ ինչ է սպասվում: Հասանք հրդեհի վայր: Բոլորս գիտեինք մեր անելիքը: Վառվողը մի տնակ էր: Բոցը մեծ երախով լափում էր ամեն հանդիպած բան՝ մարդու երկար տարիների աշխատանքի արգասիքը: Ճշգրիտ, հստակ եւ արագ գործողությունների շնորհիվ մեզ հաջողվեց փրկել տնակը:

Սա իմ առաջին հրդեհն էր: Ես անչափ հպարտ էի: Մենք փրկեցինք այդ մարդու տունն ու ունեցվածքը, եւ ես դրանում իմ լուծման ունեի:

Միշտ հիշում եմ այս դեպքը. առաջինն էր: Ոչ մի հրդեհ նման չէ մյուսին: Մեկ նմանություն կա. կանոն է ամեն ինչ եւ մոխրացում:

Հիմա ես հպարտ եմ, որ հրշեջ եմ, որ կարողանում եմ օգնել մարդկանց:

Միեր Սիմոնյան
Վանաձորի թիվ 2 ՅՓՁ

Ջրհեղեղ. իրազեկ եղեք

Լոռու մարզի Շահումյան գյուղով հոսում է շատ փոքր մի գետ՝ Տանձուտը: Այնքան փոքր, որ առաջին հայացքից թվում է, թե այն ոչ մի վտանգ չի կարող ներկայացնել: Սակայն գարնանը, տեղումների ու ձնհալի շրջանում, գետը սկսեց զորանալ: Այնքան ջրաշատ էր դարձել, որ սկսել էր ավերից դուրս գալ: Եւ ահա մի երեկո գյուղացիք աղմուկ-աղաղակով դուրս թափվեցին տներից: Նրանք խուճապի էին մատնվել: Գետը դուրս էր եկել հունից եւ ողողելով ավերիք՝ մաքրում, քշում-տանում էր դեմն ընկած ամեն ինչ: Հանկարծ լսվեց մի ձիչ եւ ուժգին դղրդոց: Գետը փոխելով հունը՝ մտել էր գյուղացու հողամասը եւ քշել-տարել անասնագոմը՝

անասուններով, այնուհետեւ հասնելով տանը՝ փլել էր տան կեսը: Բարեբախտաբար մարդկանց չէր վնասել: Գյուղացիք հուսահատ եւ անզոր նայում էին. նրանցից մի քանիսն էլ աշխատում էին փրկել գույքը, անասունները, բայց այդ փորձերը ոչ միշտ էին արդյունավետ լինում:

Այս դեպքն իմ մեջ տպավորվել է: Ես տեսնում էի, որ մարդն անզոր է բնության արհամարհի դեմ, բայց նաեւ հասկանում, որ կարելի էր պատրաստ լինել եւ դիմակայել, եթե ժամանակին կառուցեին պատնեշներ, մաքրեին գետի հունը, տներն ու անասնագոմերը կառուցեին ավելի ապահով վայրում կամ գետից հեռու:

Հովիկ Սահակյան
Վանաձորի թիվ 2 ՅՓՁ-ի պահակախմբի պետ, փ/ծ կապիտան

Իրազեկում, տարահանում, պատասպարում...

Խորհրդային տարիներին Սիսիան քաղաքի Գորհայք գյուղի ջրամբարում վթար էր տեղի ունեցել: Ջրամբարը բարձր գտնում էր եւ սպառնալիք էր Սիսիան քաղաքի, մոտակա գյուղերի եւ անգամ արդրեջանական մի քանի գյուղերի համար: Մարդիկ խուճապի էին մատնվել: Տեղեկություն չկար, չկար նաեւ տարահանում: Բնակիչները փախչում էին՝ ուր կարող էին եւ ինչով կարող էին:



Միայն ոստիկանական մի քանի մեքենա, այն էլ բավական ուշ, բարձրախոսով հաղորդում էին աղետի մասին՝ խուճապահար ժողովրդին խորհուրդ տալով բարձրանալ մոտակա սարերը:

Լինելով Փրկարար ծառայությունում՝ նոր եմ գիտակցում, թե որքան կարեւոր է աղետների մասին բնակչության իրազեկման ձիշտ կազմակերպումը, տարահանումն ու պատասպարումը:

Վահագն Ստեփանյան
Սյունիքի մարզ, ք. Սիսիան

Բնակիչների անտեղյակության հետեւանքով

Դեպքը տեղի է ունեցել Ստեփանավան քաղաքում: 1991թ. ռուսների կողմից կառուցված փայտաշեն շենքերից մեկում: Ուշ երեկոյան շենքում բռնկված հրդեհը գնալով բորբոքվում էր: Բնակիչները ջարդում էին ապակիները, որպեսզի դուրս հասնեն իրենց իրերը: Հրշեջները փորձում էին մուտքի դռնից ներս մտնել, բայց բնակիչները խանգարում էին հրդեհաշիջման աշխատանքներին: Քամին էլ ուժեղանում էր՝ դժվարացնելով հրշեջների գործը: Օգնության հասած մոտակա քաղաքների հրշեջների ուժերով գրեթե մեկ ժամում կարողացել էին կտրել կրակի առաջխաղացումը, բայց վերջին պահին նորից կրակը դարձավ անկառավարելի եւ շենքը ամբողջովին սկսեց այրվել: Հրշեջներին մնում էր միայն հովացնել կողքի շենքերը՝ որպեսզի նրանք եւս չայրվեն: Շենքն ամբողջությամբ այրվեց:

Արարատ Այվազյան
Ստեփանավանի հրշեջ մաս, փ/ծ կրտ. սերժանտ

Ոնքը շինելու փոխարեն

Դեպքը, որի մասին ուզում եմ պատմել, միշտ հիշում եմ ոչ մի-

այն այն պատճառով, որ առաջին անգամ էի մեկնում հրդեհի վայր: Այրվում էր մեր համաքաղաքացու 3000 քմ տարածք գրադեցնող կացարանը: Իսկ հրշեջների ամբողջ օրվա քրտնաջան աշխատանքն ապարդյուն անցավ: Եվ ահա թե ինչն էր պատճառը: Երբ հրշեջ ջոկատները հրդեհի բռնկված մասում կատարում էին իրենց աշխատանքները: Շենքի մյուս կողմից հարեանները, բանից անտեղյակ, բացում են լուսամուտները՝ իրենց >>> 5



1-01 հրշեջ ծառայություն

Ստեղծագործում են հրշեջները

<<< 4 կարծիքով օգնություն ցուցաբերելու եւ տնից իրերը դուրս հանելու նպատակով: Մի բան, որ չէր կարելի անել: Քամին անցավ գործի, եւ կրակը, որը կարծես թե արդեն կասեցվել էր՝ միանգամից դարձավ անկառավարելի ու սկսեց խժռել ամեն ինչ: Մարտիկները հագիվ կարողացան հեռանալ այրվող տարածքից: Հինգ րոպեում տունն ամբողջովին այրվեց:

Արսեն Ավետիսյան
Սպիտակի ՀՓՁ-ի օղակի հրամանատար,
փ/ծ սերժանտ

Երջանիկ պատահականություն

Իմ կյանքում եղել է մի դեպք, որը ես միշտ հիշում եմ: Ես 17



տարեկան էի: Ընկերներով զբոսնում էինք, երբ լսեցինք, որ հրդեհ է: Մեր հարեւանի գոմի տանիքն էր վառվում: Վազելով գնացինք, որ տեսնենք, թե ինչով ենք կարողանում օգնել, մինչեւ հրշեջները կհասնեն: Գոմի տանիքում խոտի դեզ կար, դեզի մեջ՝ գազի բալոն: Մենք այս մասին չգիտեինք: Եվ երբ մենք մի պահ հեռացանք ջուր բերելու, գազի բալոնը պայթեց:

Արկադի Կարապետյան
Լոռու մարզի, Տաշիրի ՀՓՁ-ի 4-րդ պահակախմբի ավագ հրշեջ

Կորչեն սերիալները

1990 թվականի մութ ու ցուրտ ձմեռվա մի օր, երեկոյան ժամը 8-ի մոտ կլինեք: Հանկարծ ամբողջ թաղամասը միանգամից լուսավորվեց: Ինչպես հետո պարզվեց՝ այրվում էր թաղամասի տնակներից մեկը: Տանտիրուհու (ավելի ճիշտ՝ նրա արդուկի) պատճառով: Ինչպես հետո պարզվեց, լույսը միացնելուն պես, որպես երդվյալ սերիալսեր, տիկինը շտապել էր հարեւանի տուն, մեքենայի մարտկոցից միացված

հեռուստացույցի մոտ, տանը թողնելով միացված արդուկը, եւ քնած փոքրիկ աղջկան: Հարեւանները մի կերպ էին հասցրել փրկել փոքրիկին:

Անդրանիկ Գասպարյան
Գուգարքի ՀՓՁ-ի հրշեջ
փ/ծ սերժանտ

Վերաբերմունքը՝ տարիների անընդհատ աշխատանքի արդյունք

Ուզում եմ անդրադառնալ վերջերս մեր՝ Տաշիրի տարածաշրջանի մի արտակարգ դեպքի, որը մեծ ազդեցություն թողեց ինձ վրա: Խոսքս՝ վերջերս տարածված գազի եւ բենզինի լցակայանների պայթյունների մասին է: Իմ հերթապահության ժամանակ

լցակայանում, կանոնների խախտման պատճառով, տեղի էր ունեցել պայթյուն: Ձայնն այնքան ուժեղ էր, որ լսվել էր մեր հրշեջ մասում, որը դեպքի վայրից 5 կմ հեռու է: Վնասվել էին շրջակայքում գտնվող մեքենաները եւ մոտակա շենքերի ապակիները: Լցակայանի աշխատակիցներից մեկը զոհվեց: Ինչպես հետո պարզվեց, պայթյունը տեղի էր ունեցել բարձր ճնշումից:

Ինչպես միշտ, մենք արագ արձագանքեցինք ահազանգին եւ կարողացանք անհրաժեշտ օգնություն ցուցաբերել: Դեպքը ծանր էր, տեսարանը՝ ահավոր: Այս դեպքից հետո հասկացա, որ փոխվել է մարդկանց վերաբերմունքը մեր ծառայության նկատմամբ:

Հայկ Մկրտչյան
Տաշիրի ՀՓՁ-ի 1-ին հերթափոխի պետ,
փ/ծ սերժանտ

Առաջին օգնության հրաշքները

2007 թվականի ամռան մի երեկո էր: Ես հորեղբորս տուն հյուր էի գնացել: Հարեւանի

տղան խուճապահար իրենց տնից դուրս թռավ ու խնդրեց շտապ օգնություն զանգել: Ես բջջային հեռախոսով կապվեցի, միաժամանակ ճշտելով, թե ինչ է պատահել: Արթուրն ասաց, որ իր անչափահաս մանկիկը չի շնչում: Վազեցի այնտեղ եւ տեսա, որ մայրը երեխային գրկած լաց է լինում: Մոր ձեռքից վերցրի փոքրիկին, պառկեցրի գետնին եւ սկսեցի զննել բերանի խոռոչը: Ծնողներն ասացին, որ երեխայի բերանում ոչինչ չի եղել: Ես մանկիկին ՇՈՒԲ արեցի, ապա՝ ստուգողական 2 ներփչում: Ծնչառությունը չվերականգնվեց: Ծնչուղիները խցանված էին: Որովայնի շրջանում սեղմումներ արեցի եւ փոքրիկի բերանի խոռոչում նկատեցի սննդի մնացորդներ: Մաքրեցի թաշկինակով: Դեռ ինքնուրույն չէր կարողանում շնչել: Շարունակեցի ներփչումները: Լա ճչաց եւ սկսեց լացել: Մարմնի ջերմաստիճանը պահելու համար երեխային փաթաթեցի ծածկոցով: Այդ պահին շտապ օգնության մեքենան ժամանեց: Հաջորդ օրն իմացա, որ մանկիկը թունավորվել էր, եւ շնչուղիները խցանվել էին փսխումից:

Կամո Զատինյան
Ստեփանավանի ՀՓՁ-ի օղակի հրամանատար,
փ/ծ սերժանտ

Պատերազմից մինչեւ հրդեհաշիջում

Դեպքը, որ ուզում եմ նկարագրել, տեղի է ունեցել Վանաձորում: Ես, համարյա տասը տարի է, աշխատում եմ հրշեջ ծառայությունում, ու չնայած մասնագիտության բերումով շատ հրդեհներ եմ տեսել եւ մասնակցել դրանց հրդեհաշիջմանը, սակայն նման բան չէի տեսել: Այրվում էր բենզալցակայան: Դա մի թիթեղյա տնակ էր, իսկ բաքերը անմիջապես տնակի վրա էին: Բաքերից մեկի մեջ ութ տոննա դիզելային կար, իսկ մյուսում՝ վեց տոննա բենզին: Նրանց երկուսի վրա էլ կար փոքր պատռվածք, եւ կարծես լավա էր ժայթքում: Մենք փորձում էինք փրփրահեղուկով հանդարտեցնել այդ կատաղած դեփն, որը պատրաստ էր մոխրի վերածել շրջապատը: Անտանելի էր սպասողական վիճակը. կարող էր պայթյուն տեղի ունենալ, եւ այդ կրակն ուղղակի կխժռեր մեզ: Զերմաստիճանն այնքան բարձր էր, որ տասը մետրից ավելի չէինք կարողանում մոտենալ, թվում էր՝ հիմա երեսիդ ու մարմնիդ միսը



հեղուկ դարձած կիսի ոսկորների վրայից: Չէի ասի, թե վախենում էի, վախը վաղուց մեռել է իմ մեջ՝ դեռ պատերազմի տարիներից, ուղղակի մահը պտտվում էր շուրջն ու կարծես՝ աչքով անում: Մտածում էի տղաների մասին, որ անհայր չմեծանան, ինչպես ես եմ մեծացել: Որպեսզի խոսքս շատ չերկարի, ասեմ, որ ի վերջո մարեցինք այդ կրակը եւ, փառք Աստծո՝ առանց զոհերի: Միայն հիշում եմ, որ ձեռքս էի այրել, երկար ժամանակ չէի ապաքինվում: Ոչ ոք չիմացավ այդ մասին, երեւի պետք էլ չէր, որ իմանային...

Վարդան Զիրկինյան
Վանաձորի թիվ 1 հրշեջ մաս

Տեխնիկայի պակաս, անհակազագ աշխատանք

Ձմռան մի ցուրտ օր էր, սովորականի պես ընդունել էինք



հերթափոխը: Օրը կարծես բարեհաջող էր ավարտվում: Բայց լուսաբացին ահագնազ ստացանք. հրդեհ էր բռնկվել Սիսիանի Շախմատի տանը կից արվեստի դպրոցում: Անմիջապես մեկնեցինք դեպքի վայր: Մեզ քաջ ծանոթ շենք էր, կառուցված

էր խորհրդային տարիներին, միջնապատերը փայտից էին, ծածկը փայտից էր: Դեպքի վայր հասնելով՝ կատարեցինք հետախուզում եւ բացազատում: Արտաքին նշաններից արդեն պարզ էր հրդեհի ուղղությունը: Հրդեհաշիջումը կարծես նորմալ էր ընթանում, երբ հետախուզության արդյունքները պարզեցին, որ շենքի ներսում մարդ է մնացել: Նախօրոք կազմված պլանները փոխվեցին, ստեղծվեց օպերատիվ շտաբ, լրացուցիչ ուժեր կանչվեցին: Հրդեհն ամբողջությամբ մարեցինք, սկսեցինք փնտրել տուժածին:

Չհասցրինք: Փայտե ծածկը, որի վրա առնվազն մեկ մետր հող էր լցրած, փլվել էր տուժածի գլխին: Սկսեցինք մաքրման աշխատանքները, բայց գտանք ամբողջությամբ այրված մարդու մարմնի մասեր միայն: Դա առավելագույնն էր, որ կարողացանք անել սեղմ ժամկետում ու միայն մեր նվիրվածության ու ֆիզիկական պատրաստվածության

շնորհիվ: Բավական է ասել, որ տեխնիկան չէր բավարարում, ծխատար գոտի էինք մտնում առանց հակազագի:

Համլետ Պողոսյան
Սիսիանի ՀՓՁ-ի հերթափոխի պետ, փ/ծ սերժանտ



անտիուտոպիա

Ավիկ Ավանեսյան

Բոլոր դռները

(Հնգաչափ տարածության անդունդներում)

Ձեր ուշադրությանը ներկայացվող պատմության գործողությունները տեղի են ունենում հեռավոր ապագայում, ուստի վիպակը կարելի է, որոշ վերապահումով, դասել ֆանտաստիկայի ժանրին: Փորձագետ Սյորենին, որը մեր գլխավոր հերոսն է, մենք հանդիպում ենք այն պահին, երբ նա ապրում է իր կյանքի գուցե ամենապատասխանատու եւ ճակատագրական օրերը: Նա կանգնած է երկընտրանքի առջեւ, նա գիտի, որ նաեւ իր եզրակացությունից է կախված մոլորակի ճակատագիրը: Այն ժամանակներն են, երբ մարդկությունը հայտնաբերել է չորրորդ չափումը եւ նախապատրաստվում է անցնել հինգերորդին: Միաժամանակ ոչ ոք չգիտի, չի կարող պատկերացնել գիտական աննախադեպ նվաճումների հետ կապված այդ քայլերի հետեւանքները: Սյորենը չի ուզում սխալվել, սխալվելու իրավունք չունի ու տենդագին փնտրում է իրեն եւ շատերին հուզող հարցերի պատասխանները: Փնտրում է իր եւ ուրիշների մեջ, անցյալում, ապագայում, ամենուր: Այդ փնտրտուքը սկսում է նմանվել չարչարանքի: Կարծես պատահականորեն նա համակարգչային արխիվներից մեկում բախվում է անցյալում ապրած անհայտ հեղինակի տեքստին: Սյորենն անբացատրելի մի կապ է տեսնում տեքստում գրվա-

ծի եւ իր ապրածի միջեւ: Նրան թվում է, թե իր որոնած պատասխանը նաեւ այդտեղ կարելի է գտնել: Միաժամանակ պարզվում է, որ Փորձագետների Կենտրոնի իր նախորդը՝ Անանդը, անհայտացել է: Սյորենը գիտի, որ ստեղծված իրադրության գնահատման հարցում իր եւ Անանդի տեսակետները գրեթե չէին տարբերվում: Դա եւս լրջորեն անհանգստացնող հանգամանք է: Ընդ որում՝ մարդն անհայտանում է որոշում կայացնելուց անմիջապես առաջ: Սյորենը համոզված է, որ հենց այդտեղից էլ պետք է սկսել, եւ որ անպայման պետք է պարզել Անանդի անհայտացման պատճառները: Ահա «Բոլոր դռները» վիպակի առաջին երեք գլուխների համառոտ բովանդակությունը: Վաղն առավոտյան Սյորենը կխոսի Փորձագետներից ամենատարեցի՝ Ալեքսանդրի հետ: Իսկ այսօր աշխատանքն ավարտել ու տուն է գնում: Այսօր իր եւ Սառայի ամուսնության տարեդարձն է:

Մի բան էլ ինչո՞ւ է այս պատմությունը զետեղված «անտիուտոպիա» խորագրի ներքո: Որովհետեւ մյուս գլխավոր հերոսին, որն անհայտ հեղինակն է, թվում է, թե մարդկության ապագան բացառապես լուսավոր երանգներով պատկերացնելը լրջորեն հիմնավորված չէ:

Սկիզբը՝ 263-265 համարներում

4.

Մի տեղ նույնիսկ, որպես վախվորած կարծիք ավելի, քան անհողորդ կասկած, հայտնում էր, թե այդ հենց աստվածների վարքուբարքն է, որ փոխադրվել-ներմուծվել է Երկիր, մեկ այլ տեղ էլ պնդում, որ քաղաքակրթություն ասված ամենասարսափելի գեները մարդիկ միշտ ուղղել են իրար դեմ, ահա եւ հայտնվել ենք փակուղում...

Ապա հետեւում էր այսպիսի մի հատված.

«Ատելի այդ Քաղաքը: Ատելի, որովհետեւ չափազանց շատ սիրեցի:

Այնքան, որքան անհրաժեշտ էր ատելու իրավունքը նույնպես ունենալու համար:

Հիմա ես այնտեղ չկամ:

Ուրեմն՝ ես անսահմանափակ եմ դարձրել ամեն վայրկյան այնտեղ լինելու իմ հնարավորությունը:

Որովհետեւ հիմա ես եմ իմ Քաղաքը: Ու լքեցի:

Իսկ դրանից առաջ խախտվեց ներդաշնությունը...»:

«Ներդաշնությունը»՝ անհայտ հեղինակին բարձրաձայն կրկնեց Սյորենը: «Ի՞նչ է ներդաշնությունը». ասաց՝ հնչեցնելով իր խոսքը հին մի հարցի նմանությամբ: Վեր կացավ: Քայլեց մինչեւ պատուհանն ու հետ: Նորից նստեց քոմփյութերի առջեւ: Անհայտ հեղինակի ամբողջ տեքստը՝ մի քանի տասնյակ էջ ընդամենը, վերածեց ձայնի: Ընդ որում՝ դա առավելագույնս մոտ

էր լինելու անհայտ հեղինակի ձայնին: Մեկ նախադասությամբ անգամ կարելի էր վերականգնել այդ բառերը գրած մարդու շատ ու շատ տվյալներ, ներառյալ՝ ձայնը: Բարդ բան չէր, մի հրահանգ, եւ ֆայլը 30-40 վայրկյան



նից պատրաստ էր: Մտածեց, որ այդպես ավելի հարմար է, կլսի՝ երբ ուզենա: Վերցրեց կրիչի մեջ: Ցանկություն առաջացավ մեկերկու տող լսելու: Միացրեց: Թեթեակի խաչուտ բարիտոնը գրեթե հատ-հատ բառեր էր արտաբերում. «Ժամանակակից աշխարհում միակ հնարավոր կենսակերպը փախուստն է՝ իմաստակիր, թե անիմաստ, կամավոր, թե ակամա, միեւնույն է՝ փախուստը: Ելք պիտի գտնել միշտ: Ու միշտ էլ ելք է համարվում հենց փախուստը: Փախուստներ են՝ դեպի Յուդիսեն ու Յեդիսենից, դեպի այրվող Յոմ ու այրվող Յոմից, դեպի իմաստասիրություն ու իմաստասիրություն

նից: Սա դեռ նշանավորների դեպքում: Բա սրանք: Ու՛ր են փախչում սրանք, ամենքը, բոլորը»:

«Իսկ ես»՝ անցավ Սյորենի մտքով: «Չէ, եթե ես հիմա մտածում էլ եմ փախչելու մասին, ապա միայն՝ տուն փախչելու: Միայն՝ Սառայի մոտ: Իմ Սառայի»:

Թվաց, թե Սառայի անունը խաղաղեցրեց: Ավելի ստույգ՝ դա սահման գծելու պես մի բան էր: Ի՞նչ սահման՝ գուցե հարցնեք: Մարդու սահմանի մասին է խոսքը՝ կլինի պատասխանը, բայց այդ պատասխանը բացատրություն չի դառնա: Մինչդեռ հարցնողի ուզածը պատասխանը չէ սուկ, այլ բացատրությունն՝ առաջին հերթին: Հարմար առիթ է ասելու, որ բացատրել, առհասարակ, նշանակում է մեկ քայլ եւս հեռանալ էությունից այն երեսույթի, որն իբրեւ թե բացատրվելու կարիք է զգում: Այդպիսի մի երեսույթ էլ ահա «մարդու սահմանն» է: Շատ պարզ բան է. մարդը ծնվում է իր սահմանների հետ միասին, իսկ որպեսզի ավելի գեղեցիկ հնչի՝ ծնվում է իր սահմաններում: Ո՛չ ուրիշ: Հետագայում արդեն ոմանք ամեն ինչ անում են այդ սահմանների մեջ տեղավորվելու համար, իսկ ոմանք էլ, շատ շատերը, իրենց սահմանները խախտելու անգուսպ տենչ են ունենում եւ ամեն գնով փորձում են հագուրդ տալ այդ տենչին: Մեր հերոսուհու գծած սահմանը երրորդն է եւ ահա թե՛ որը: Բայց նախ ասենք, որ Սյորենն իր մտքերը սովորաբար նաեւ տեսնում էր: Ոչ մի փոխաբերություն, ուղղակի այդ մտքերը, ծնվելուն պես, վերածվում էին

պատկերների: Կամ հենց իբրեւ պատկեր էլ ծնվում էին: Ահա հիմա էլ նա պարզ տեսնում էր, թե ինչպես է գծվում այդ սահմանը: Կանգնած է Սառան՝ իր փխրուն ձեռքերի բաց ավերակ առաջ պարզած, ասես հմայության ծես լինի, ու դեն է հրում մնացյալ աշխարհը, որն այդ պահին թանձր մառախուղի կերպարանք ունի եւ վրա է տալիս բոլոր կողմերից, բայց չի գորում, չի զորում եւ, ի վերջո, հետ քաշվելով՝ տեղ է բացում իրենց՝ երկուսի համար...

Ու խաղաղ է այդտեղ, աշխարհի՝ հավերժորեն վայրի ճանկերից հմայությամբ հետ խլված այդ տարածքում: Խաղաղ է ու այդ խաղաղությունն ամբողջովին հյուսված է սիրո խռովքից...

Տուն, ուղիղ դեպի տուն, դեպի Սառան:

Վարդեր պատվիրեց:

Մոտեցավ աշխատասենյակի դռանը, որ սա, իրեն ճանաչելով, բացվի: «Ի՞նչ կապ կարող է լինել իմ այս դռան, մեր բոլորիս դռների ու անհայտ հեղինակի հիշատակածների միջեւ: Սրանք բացվում են առանց բախելու, փաստորեն: Փիլիսոփայելու ոչ մի հնարավորություն չեն տալիս»՝ իբրեւ թե դժգոհեց Սյորենն ու ժպտաց: Կատակի տվեց, սակայն գուցե թե հենց նույն նկատառումներով նա քաղաքի արվարձաններից մեկում գտնվող իր առանձնատան համար պատվիրել էր հենց «հինավուրց» դռներ, որոնք ինքը՝ բացում, ինքն էլ փակում էր: Երբեմն նույնիսկ՝ բախում, երբ Սառան տանն էր սպասում իրեն:

Դուրս եկավ միջանցք: Դուռը հետ սահեց ու փակվեց: Երկար ու լայն միջանցք էր, աչ ու ձախ կողմերում՝ աշխատասենյակներ: Շատ աշխատասենյակներ: Տեսնես ինչով են զբաղված այդ աշխատասենյակներում՝ նստածները: Երբեք այդ հարցը Սյորենին չէր հետաքրքրել: Հիմա ինչու հանկարծ կարեւոր դարձավ: Մոտեցավ վերելակին: Սա էլ «բարեհաճ մեկն» էր եւ ստաուփուս ու պատրաստակամ եկավ-կանգնեց: Սյորենը մտավ ներս: «Ներքե»՝ ասաց, ու վերելակը 40-րդ հարկից սկսեց իջնել: Աչքն ընկավ դիմացի հայելուն: Սա ինքն է, թե՛ ինքը չէ: Հին մի խոսք հիշեց՝ որոշակի տարիքից սկսած մարդ ինքն է իր դեմքը կերտում: Ընդ որում՝ արտաքինի մասին էր ասված, այսինքն՝ հենց դեմքի ու դիմագծերի: «Ահա այս դեմքն, ուրեմն, ես եմ կերտել, - նկատեց Սյորենը, - չէի ասի, թե այս գործում վարպետ եմ»:

Վերելակից դուրս ելավ եւ միանգամից շենքի ետնաբակը մտնելու փոխարեն քայլերն ուղղեց դեպի փողոց: «Մի հայացք նետեմ կյանքին»՝ ասաց ինքն իրեն: Նա

յեց՝ մայթին կանգնած: Նույն «կյանքն» էր: Հսկա մայրուղին, ասես լայնահուն մի գետ, դանդաղ հոսում էր, միայն թե ալիքների տեղակ մեքենաներ էին: Անհաշիվ, մեկը մյուսի պոչին կպած, մեկը մյուսից պլպլան ու անկիրթ՝ իրենց վարորդների պես՝ տղամարդիկ ու կանայք. կարելի էր տեսնել նրանց դեմքերը, ովքեր մեքենայի ապակիներն իջեցրել էին: Հոյզերի շատությունից անհույզ դարձած այդ դեմքերը՝ այլեւ ոչնչի ու ոչ ոքի չսպասող, ոչինչ չսող ու չտեսնող, բազում սերունդների ավանդած ինտրոյակով գոյության պայքարի մեջ մտած ու համաշխարհային հարահոսին «ազնվորեն» ծառայող: Նյութ, պարզապես իբրեւ նյութ, հում նյութ, որից ինչ-որ բան, ինչ-որ շատ կարեւոր բան հազարամյակներ շարունակ արարել են խոստանում մոլորակի զարմանալիորեն տարատեսակ ու համառորեն նույն փարավոններն ու կեսարները, ցարերն ու փաղիշահները, տերերը:

Ուղիղ դիմացին, փողոցի մյուս կողմում խռնված բազմություն էր: Երեսուց էր, որ ժամանակ առ ժամանակ ինչ-որ բառեր էին վանկարկում, բայց փողոցային ժխորի մեջ անհնար էր որեւէ բառ առանձնացնել-հասկանալը, պարբերաբար բարձրացնում ու իջեցնում էին ձեռքերը... հանգիստ չէին:

Իսկ որոշակի բարձրության վրա դժմում էր օդային տրանսպորտը. հանրային փոխադրամիջոցներ հիմնականում:

Ահա այն ամենն, ինչ կարելի էր նկատել քաղաքի կենտրոնում այդ պահին: Բացի, իհարկե, դժոխային աղմուկն ու դժոխային լույսերը:

Սյորենը շրջվեց դեպի երկնաքերը, ներս մտավ ու արագ քայլերով կտրելով ամբողջ նախասրահը՝ մտավ հետնաբակ: Դա բարձրաստիճան ծառայողներին կցված օդանավակների կայանատեղին էր: Մոտեցավ վերջին մակնիշի մուգ կարմիր օդանավակին: Իրենն էր: Ավելի ծիշտ՝ Անանդինը, որ հիմա անցել էր իրեն: Վարորդ-օդաչու-օգնականը սպասում էր: Նստեց եւ ասաց՝ տուն:

Տղան բավական երիտասարդ էր, բայց արդեն փորձառու. վարպետորեն հաղթահարելով խցանումների պատճառով հաճախակի անկանոն դարձող օդային երթեւեկությունը՝ արագ տուն հասցրեց:

Երկհարկանի, համեստ ու ճաշակով կառուցված առանձնատուն էր: Սյորենը մոտեցավ մուտքի դռանն ու բախեց:

- Եկա, սիրելիս, - ներսից ձայնեց Սառան:

Շարունակելի



Անհարժար թեժա



2001 թ. Սինգապուրում կայացած զուգարանների հետ կապված խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովում՝ որոշվում է նույնների 19-ը հռչակել Ջուգարանի համաշխարհային օր: Գիտաժողովի անցկացման վայրն ամենեին էլ պատահաբար չէր ընտրված, քանի որ Սինգապուրը հայտնի է պետքարանների համարյա կատարյալ մաքրությամբ: Ասիայից, Եվրոպայից եւ Յուսիսային Ամերիկայից ժամանած 200 պատվիրակներ, որոնք ներկայացնում էին ազգային 17 զուգարանային ասոցիացիաներ, հավաքվել էին քննարկելու իրենց խնդիրները եւ տվյալ ոլորտի զարգացման հեռանկարները: Ստեղծվում է նաեւ Ջուգարանային համաշխարհային կազմակերպություն, որի նախագահ է ընտրվում սինգապուրցի Ջեք Սիմը: Կազմակերպության շտաբ-բնակարանը եւս գտնվում է Սինգապուրում:

Մասնակիցների նախաձեռնությամբ իրականացվում է նաեւ «Երջանիկ պետքարան» խորագրով միջոցառումը, որի հիմնական նպատակը՝ հինգաստղանի համակարգի օգնությամբ հանրային զուգարանների դասակարգումն էր: Ի դեպ, Սեուլից մոտ 40 կմ հարավ Ջեքն իր համար մի նոր առանձնատուն է կառուցել, որը նման է մի մեծ... զուգարանակոնքի: Երկհարկանի տունն ունի երկու հյուրասենյակ, երկու ննջարան, երկու լոգարան ու հյուրերի համար նախատեսված բազաթիվ սենյակներ: Ջուգարանային համաշխարհային կազմակերպության նախագահը թերեւս այս կերպ է որոշել հանուրի ուշադրությունը սեւեռել սանիտարական խնդիրների վրա:

Մի քիչ պարտություն

Ժամանակակից զուգարանների առաջին նախատիպերը հայտնաբերվել են Շոտլանդիայի ափամերձ շրջանում (մեկ այլ աղբյուրի հավաստմամբ՝ Յին Յնդկաստանում), շուրջ 5 հազար տարի առաջ: Իսկ աշխարհի ամենահին զուգարանակոնքը, գիտ-

Աղետներից ու արտակարգ իրավիճակներից խուսափելու, դրանց հետեւանքները նվազեցնելու պարզագույն միջոցներից է հիգիենայի կանոնների պահպանումը: Տուժածների առաջին բուժօգնություն ցուցաբերելուց, աղետի գոտուց մարդկանց տարահանելուց, նրանց ժամանակավոր օթեւաններում տեղաբաշխելուց պակաս կարեւոր չէ՝ ապաստարանների սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը: Այդ մասին են վկայում նաեւ պատմական հիշատակությունները. միջնադարյան Եվրոպայում բռնկված կորուսաբեր համաճարակները կամ ասենք՝ բոլորովին վերջերս Նոր Օւլեանը պատուհասած Կատրին փոթորկի պատճառած անախորժությունները: Փոթորկին հաջորդած ժամանակահատվածում մարգաղաշտերում ապաստանած մարդիկ հայտնվել էին հիգիենիկ պայմանների լիակատար բացակայության պայմաններում: Բայց թողնենք արտակարգ իրավիճակները եւ անդրադառնանք խաղաղ ժամանակներում ապրող մեր համաքաղաքացիների խնդիրներին: Ծառերի կարծիքով բնական կարիքները հոգալու համար

հարմար են եւ՝ փողոցների անկյունները, եւ՝ ստորգետնյա անցումները, եւ՝ տարբեր հաստության ու բարձրության պատերը, եւ՝ վերելակները, եւ՝ շենքերի մուտքերը, եւ՝ ամենատարբեր տրամաչափի ծառերի բներն ու թփերը: Ձեզանից ով կյանքում գտնե մի անգամ վերելակ մտնելիս քիթն ափով չի պահել ու ոտքերի մատների վրայով թռել գարշահոտ «լճակի» վրայով: Իսկ կարող եք հիշել, թե վերջին անգամ երբ եք օգտվել ծանրաբեռնված երթուղուց ունեցող փողոցների անցումն ավելի ապահով ու անվտանգ դարձնելուն կոչված ստորգետնյա անցումներից: Նույնիսկ մեծահասակներն են վախենում գետնանցում մտնել, էլ չենք խոսում երեխաների մասին: Գետնանցումների սարսափելի գարշահոտությունից լավագույն դեպքում կարելի է ուշաթափ լինել: Մինչդեռ աշխարհի առաջադեմ մարդկության մի ստվար հատված ձգտում է հիգիենայի հետ կապված խնդիրները մշտապես պահել բոլորի ուշադրության կենտրոնում՝ դրա համար գտնելով տարբեր հնարամիտ ու զվարճալի ձեւեր:

նականների կարծիքով, ստեղծել են չինացիները մ.թ. 50-100 տարի առաջ: Մ.թ. 2 հազար տարի առաջվա ժամանակներին վերագրվող, նստատեղ ունեցող առաջին զուգարանները հայտնաբերվել են Յին Եգիպտոսում:

Ջրամաքրման համակարգ ունեցող առաջին զուգարանների «հեղինակային իրավունքը» վերագրում են Կրետե կղզում զարգացած էտրուսկյան քաղաքակրթությանը: Կնոսոսում պեղումների ժամանակ հայտնաբերվել են անցք ունեցող քարե աթոռակներ, որոնց տակ տեղադրված էին ջրատար խողովակներ:

Յին հռոմեացիների մաքրահիդրոլոգիայի մասին հայտնի է բոլորին: Յին Հռոմն ունեցել է բազմաթիվ բաղնիքներ, կոյուղի, ջրամատակարարման զարգացած համակարգ:

Որպես հակադրություն՝ միջնադարյան Եվրոպան, մեղմ ասած, մաքրակենցաղությամբ այնքան էլ չէր փայլում: Օրինակ՝ Փարիզում սարսափելի գարշահոտություն էր տիրում: Մարդիկ գիշերանոթների պարունակությունը դատարկում էին օգտվելով ամենակարճ «ճանապարհից», որն է՝ պատուհանից ուղիղ փողոց: Ճիշտ է՝ դրան նախորդում էր մի կարճ նախազուշացում. «Ձգուշացեք, ջուր է»: Չնայած՝ նրան, ինչը վերելից թափվում էր անցողիների վրա, ջուր անվանելն ուղղակի մեղք է: Եվրոպացիների գիտակցության մեջ փոքրիկ բեկում է մտնում միայն այն ժամանակ, երբ մարդիկ սկսում են հասկանալ, որ բռնկվող բազմաթիվ մահաբեր համաճարակների պատճառն իրենց փնթիկությունն է: Միլանի կոյուղու նախագծի հեղինակ, հայտնի գյուտարար Լեոնարդո դա Վինչին Ֆրանսիայի Ֆրանցիսկ 1-ին թագավորի հրավերով գալիս է Փարիզ, տեսնելով այնտեղ տիրող հակահիգիենիկ վիճակը պարզապես ապշում է: Ստեղծված դրության շտկմանը միտված նրա գծագրերն ու առաջարկություններն,

այնուամենայնիվ, այդպես էլ մնում են թղթի վրա:

1852 թ. Լոնդոնում հիմնում են առաջին հասարակական զուգարանը: Խաղալիքի նմանվող զուգարանը՝ բազմաթիվ փայլվուն պղնձե խողովակներ ուներ եւ կիրառում էր ջուրը «քաշելու» նորագույն մեխանիզմ: Չնայած դրան, պատմական վկայություններ են պահպանվել այն մասին, որ 1858 թ. հունիսի 30-ին Լոնդոնում ստիպված են եղել ընդհատել պառլամենտի նիստը՝ թեմզա գետից տարածվող անտանելի գարշահոտության պատճառով:

1909 թ. Իսպանիայում «Ունիտաս» ընկերությունը զուգարանակոնքերի գանգվածային արտադրություն է սկսում: Յետագայում արդեն, ֆիրմայի անունը դառնում է արտադրանքի ընդհանուր անվանում:

Հանուն հարժարավերության

Ավստրալիայի կառավարությունը շուրջ 1,5 մլն ավստրալիական դոլար է հատկացրել երկրում եղած զուգարանների թիվը պարզելու եւ վերջիններիս էլեկտրոնային քարտեզը կազմելու համար:

Միացյալ Նահանգների տասներկու խոշոր քաղաքներում մոտակա հասարակական զուգարանի մասին կարելի է տեղեկանալ բջջային հեռախոսի միջոցով մատուցվող հատուկ ծառայության օգնությամբ:

Կհետում եւ Լոնդոնում գործում են զուգարանի պատմության թանգարաններ:

Թպրոնից Միսելե եկեղեցի

Ռեժիսոր Բոբ Էռնստը վարձակալել էր Սան Ֆրանցիսկոյի հասարակական զուգարաններից մեկը՝ այնտեղ համանուն օպերա բեմադրելու համար:

Բարսելոնում բեմադրված Վերդիի «Դիմակահանդես» օպերայի ժամանակակից տարբերա-

կում, իրադարձությունները ծավալվում էին բեմի վրա հատուկ այդ նպատակով կառուցված պետքարանում: Իմիջիայլոց, նշենք, որ հանդիսատեսի զգալի մասին ռեժիսորի նորամուծությունն այնքան էլ դուր չի եկել, եւ շատերն օպերայի շենքից դժգոհ են հեռացել:

Դյուսելդորֆում զուգարաններից մեկը վերածել են եկամտաբեր դիսկոտեկի՝ գրեթե նույնությամբ պահպանելով շենքի կահավորումն ու հատուկ էֆեկտները:

Մի անգամ, Սուրբ Ջատիկից առաջ, Լազոսում տեղակայված ռազմաօդային ուժերի բազայում ծառայող սպաներից մեկի կնոջը պետքարանի պատուհանից հայտնվում է Աստվածամոր տեսիլքը: Ասում են, որ դրանից հետո կինը գրեթե ամեն օր տեսնում էր այդ տեսիլքը, բայց միայն սանհանգուցի պատուհանից: Այնտեղ սկսում է մարդկանց հերթ գոյա-



նալ: Տարածքում կարգուկանոնի պահպանման նպատակով ոստիկանությունը ստիպված է լինում շուրջօրյա հսկողություն սահմանել: Սակայն Սուրբ Աստվածամայրը երեւում էր միայն սպայի կնոջն ու նրա միջոցով էր տարբեր ուղերձներ փոխանցում հավատացյալ քրիստոնյաներին:

Ջուգարանաշինության հիմնադիրներից մեկի պատվին, գյուտարարի հայրենիքում՝ Անգլիայում, նրա անունն անմահացրել են խիստ յուրօրինակ ձեւով: Նրա հայրենի քաղաքում գործող եկեղեցիներից մեկի պատուհանին գունավոր ապակիների կտորտանքից հավաքված զուգարան է պատկերված:

Էջը պատրաստեց Գոհար Բաղդասարյանը

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը



Հաղթանակը Թայմ Սքվերի վրա

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թայմ Սքվեր փողոցում բուժքրոջը համբուրող նավաստու նկարը տպագրվեց համարյա բոլոր թերթերում: Այս լուսանկարը լի է սիրով եւ վարակիչ ուրախությամբ: Առասպելի համաձայն՝

լուսանկարի հեղինակ Ալֆրեդ Էյզենշտադը որոշում է դրանից 40 տարի անց գտնել այդ զուգահեռն եւ դա նրան հաջողվում է: Ասում են, որ նրան դիմավորում են շատ երջանիկ տատիկ ու պապիկ՝ շրջապատված բազմաթիվ երեխաներով ու թռռներով:

